

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Հայտատուներին) ներկայացնելու գնառաջարկներ 13-րդ կետում նկարագրված չափանիշներով հերթագրման սարքավորումների ձեռքբերման վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 25.07.2023թ. ժ. 17:00
 - Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը –**PROC25072023/հերթագրման սարքավորում** : Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել «.rar» տարբերակով, կողավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո procurement@inecobank.am էլ Հասցեով 26.07..2023թ-ին մինչև ժ. 11:00 ԿԱՄ
 - Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝
 - ԳՆՀ կոդը –PROC25072023/հերթագրման սարքավորում
 - մասնակցի անվանումը,
 - ներկայացման ամսաթիվը,
 - ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:
3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
Գնառաջարկների ներկայացման կարգի վերաբերյալ հարցերի դեպքում՝
Կոնտակտային անձ՝ Գնումների բաժին՝ Գևորգ Գասպարյան +374 33008896
Տեխնիկայի նկարագրված չափանիշների վերաբերյալ հարցերի դեպքում՝
Կոնտակտային անձ՝ Տեխնիկական բաժին՝ Սուրեն Հովհաննիսյան +374 43002262
4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) մրցույթ չէ, և Բաց ԳՆՀ-ի տվյալ ընթացակարգը նույնպես չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա համապատասխան գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում առաջարկներից լավագույնը կարող է ընդունվել: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
5. Հայտատուներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Հայտատուն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Հայտատուն պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերը՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
 - Գնառաջարկ,
 - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն (ցանկալի է առկա տարբերակներ)
 - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
 - Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոններին համաձայնությունը
8. Գնառաջարկը լրացնելիս Հայտատուին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող համակարգերի բովանդակությունը:
9. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները ներկայացնել ՀՀ դրամով:
10. Գնառաջարկներն ուժի մեջ կմնան 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
11. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:

12. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

13. ԳՆԱՈՒՋԱՐԿ

Հ/Հ	Սարքի տեսակ	Նկարագրությունը	Քանակը	Գինը ներառյալ Բոլոր տեսակի հարկերը
1	Հերթագրման սարքավորում	<ul style="list-style-type: none"> Սարքը միացման հնարավորություն MS Outlook համակարգին Կապի տեսակը Wifi և LAN (RJ45 PoE հնարավորությամբ) Էկրան touch Էկրանի չափը առավելագույնը 11 դյույմ 	3	

Մատակարարման ժամկետները _____ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար _____ դրամ:

_____ Մասնակցի/կազմակերպության անվանումը

_____ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

" _____ 2023թ
Կ.Կր